Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԵՐԳԻԾԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Մ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Դ. Դեմիրճյանի գրական ժառանգության պատկառելի մասն է կազմում երգիծանքը՝ կատակերգություններ, ֆելիետոններ, երգիծական պատկերներ ու դիմանկարներ։ Ճիշտ է, 20—30-ական թվականներին Դեմիրճյանն էլ շատերի հետ «գրականության հիմնական դեմքերի» շարքում չէր, բայց նրա հետաքրքրությունների և որոնումների կենտրոնում միշտ էլ եղել են երգիծանքի, նրա ժանրերի հարցերը։ Հարազատ մնալով դասական արվեստի ավանդներին, կարծես անտեղյակ «պայքարող դասակարգի մարտական շեփորի» համառ կոչերին՝ նա (ինչպես նաև մյուս «ուղեկիցները») շարունակում էր ուսումնասիրել ու պատկերել անհատի հուզաշխարհը, նրա կյանքի մեծ ու փոքր դեպքերը։ Դեմիրճյանը փնտրում էր «ներքին մարդու» բացահայտման նոր, չտրորված ուղիներ։ Այդ տարիներին սովորության ուժ էին ստացել ամենատարբեր բանավեճերն ու քննարկումները երգիծանքի, նոր պայմաններում նրա նշանակության ու ժանրերի մասին։ Ոմանց կարծիքով, սոցիալիզմի հաղթանակից հետո երգիծանքն անելիք չունի. քննադատել կյանքում տեղ գտած թերությունները՝ նշանակում է թերագնահատել հեղափոխության նվաճումները, իսկ պարտված թշնամուն խարազանելն այլևս իմաստ չունի։ Տարիներ անց հանդես եկավ այսպես կոչված «անկոնֆլիկտայնության» տեսությունը, ըստ որի, նոր հասարակությանը բնորոշ չեն կոնֆլիկտները։ Երգիծանքը «փաստերով» ապացուցեց այդ կարծիքների սնանկությունը, նվաճեց գոյության իր իրավունքը։

«Գրականությունը կյանքի հայելին է» սահմանումն անվանելով սայթաքուն՝ Դեմիրճյանը գրում է, որ «գրականությունը ոչ թե պարզունակ կյանքի հասարակ հայելու արտացոլումն է, այլ բարդ կյանքի բարդ արտացոլումը»[1]։ Գրականության թեմատիկան, նրա կարծիքով, միայն դրական երևույթներն ու հերոսները չեն. բացասական երևույթներն ու հերոսներն էլ ունեն իրենց «լրիվ կենսագրությունը» (12,100)։ Ամեն մի դարաշրջան տալիս է իր տիպերը, որ այդ դարաշրջանի անբաժանելի մասն են՝ նրա նման անկրկնելի, ու Դեմիրճյանը պնդում է, որ գրականության համար ոչնչով կարևոր խնդիր չէ նաև սատիրական տիպերի ստեղծումը։ Գրականությունը, որ արտացոլում է կյանքն իր ողջ բազմազանությունը, նաև երգիծանքի միջոցով պետք է շարունակի բարու ու մարդկայինի համար մղվող պայքարը, որ սկսվել է ժողովուրդների բանահյուսությունից ու հասել մինչև մեր օրերը։

Դեմիրճյանը դեմ է արվեստում երևույթների, հերոսների «պլանային, մաթեմատիկական բաժանումներին՝ «ոչ» և «այո»ական», քանի որ «կյանքը պատրաստի առաքինությունների ցուցահանդես չէ։ Առաքինությունը գոյացնում ենք, կրթում ենք մարդկանց մեջ» (13, 285)։ Այդ գործում կարևոր դեր ունի նաև երգիծանքը։ Դրական ու բացասական հերոսների պայքարում Դեմիրճյանը նախապատվությունը տալիս է վերջիններիս ինքնամերկացման սկզբունքին։ Նա համոզված է, որ «կոմեդիան չի հանդուրժում լուրջ ցնցումներ, դրամատիկ դրություններ, կոմեդիան շատ էլ չի սիրում դրական տիպեր։ Դրական տիպեր կուլիսներումն են (հեղինակը) և սրահում (հանդիսականը)։ Ո՞ւր է տանում կոմեդիան, ո՞րն է նրա դրական ելակետը—դա հիա-

---

1 Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու 14 հատորով, հ. 12, Երևան, 1985, էջ 113։ Այս ժողովածուից կատարվող մեջբերումների հատորն ու էջը այսուհետև կնշվեն բնագրում։

նալի ցույց է տալիս այն բարձր հոմերական ծիծաղը (հոգեբանորեն՝ քննադատությունը), որով դղրդում է սրահը» (12, 91)։

Դեմիրճյանի կատակերգություններում առաջին պլան են մղվում հերոսների ինքնամերկացումն ու փոխադարձ մերկացումները։ Այսպես՝ «Ազգային խայտառակություններում» երկու հակադիր խմբավորումների պայքարում բացահայտվում են կատարված գողությունները, «Քաջ Նազարում» դրական հերոսներ չկան, իսկ «Նապոլեոն Կորկոտյանում» այսպես կոչված դրական հերոսները անգույն են, անդեմ, ակտիվ պայքար չեն մղում բացասական հերոսների դեմ։ Համոզված կարելի է ասել, որ դրամատուրգը փորձել է ենթարկվել քննադատության «ասբացասելի և արդարացի» պահանջին՝ պատկերել է նաև դրական հերոսների, բայց հաղթել է երգիծանքի չգրված «օրենքը»՝ կատակերգություններում գերիշխում են բացասական հերոսները։ Ուշադիր քննելով դասական գրողների երկերը՝ Դեմիրճյանը գրանցում էլ է նկատում նույն երևույթը։ Բացասական կերպար կերտելիս, բացատրում է նա, «դրամատուրգը չի վախենում սխալվել։ Նրան նկատում է համարձակ, առանց ցերեմոնիայի» (12,208), իսկ դրական հերոսը ժամանակի նվիրական գաղափարների կրողն է, և դրամատուրգը, հերոսին վերագրելով բազմաթիվ առաքինություններ, «գնում է նրան վերացական գծերով օժտելու ճանապարհով» (12, 208)։ Ե՛վ հեղինակը, և՛ քննադատը, և՛ հանդիսատեսը մտահոգված են դրական հերոսի ճակատագրով, ամեն մեկը յուրովի իդեալականացնում է նրան ու շարունակ փնտրում նորանոր բարեմասնություններ, որ նրանցից յուրաքանչյուրի կարծիքով պետք է ունենա հերոսը։ Այլ խոսքով՝ որքան զգույշ ու կողմնակալ է մեր վերաբերմունքը գրական հերոսի նկատմամբ, նույնքան ազատ և անկաշկանդ են գրողի ստեղծագործական հնարավորությունները բացասական կերպարներ կերտելիս։

Դեմիրճյանն իրավացիորեն համոզված է, որ երգիծանքում իդեալների հաստատումը կատարվում է առանց դրական հերոսների պայքարի՝ բացասական հերոսների դեմ։ Ապացույց՝ Սվիֆտի, Գոգոլի, Շչեդրինի, Պարոնյանի և դասական մյուս երգիծաբանների վեպերն ու կատակերգությունները։ Գույների, երևույթների խտացման ու չափազանցման սկզբունքով կերտված բացասական տիպերն ազատ ապրում ու գործում են երգիծական երկի մեջ, «կենդանի մարդիկ» են, իսկ դրական հերոսները խախտում են երկի պաթոսը, դուրս են մնում ընդհանուր մթնոլորտից, զրկվում «մարդկային իրական հատկություններից» (12,207)։

Դեմիրճյանը խիզախ նորարար էր ու անխոնջ որոնող։ Իր ժամանակի ու ժամանակակիցներին հուզող հարցերի նկատմամբ ուշադիր և զգոն գրողը տեսնում ու նկարագրում էր հրատապ, բայց քիչ կամ բոլորովին չարծարծված հարցեր։ Համոզված, որ ստեղծագործության «նպատակն է իրականության գործոն գնահատությունը (այո՛, այո՛, խստորեն բարձր գեղարվեստականությամբ» (12,54-ընդգծումը հեղինակինն է—Մ. Խ.)՝ նա իր երկերում արտացոլել է կյանքն ամենատարբեր երևույթներով, հերոսներով։ Կարծես դրամատուրգը շտապում էր «հավերժացնել» իր ապրած ժամանակաշրջանն ամբողջական պատկերով, որի մեջ կարևոր տեղ ունեն նաև բացասական տիպերը։

Դեմիրճյանի կատակերգությունների հերոսները եսակենտրոն մարդիկ են, որ աշխարհն ընկալում են միայն սեփական «եսի» դիրքերից։ Ճիշտ է, նրանք Քաջ Նազարի պես չեն «տնօրինում» աշխարհն ու մարդկանց կյանքը, բայց երբեք չեն մոռանում իրենց շահը, չեն կորցնում թալանելու, «ուտելու ե կերցնելու» հարմար պահը՝ միաժամանակ ճամարտակելով ազգային շահերից կամ փիլիսոփայելով սոցիալիզմի մասին։ Թագավոր Նազարի «Ես հերիք եմ» (10,243) սկզբունքով կարելի է բնութագրել և՛ «Ազգային խայտառակության», և՛ «Նապոլեոն Կորկոտյանի» հերոսներին։

Նոր ժամանակների «հերոսներին» Դեմիրճյանը բեմ հանեց «Նապոլեոն Կորկոտյան» կատակերգության մեջ։ Բարեղամ Գալուստիչ Պահլավունին՝ պիեսի գլխավոր հերոսը, հարմարվել է պայմաններին, երբեք չի շեղվում

«հիմնական գծից»՝ հպարտ-հպարտ զեկուցում է պլանների կատարման մասին ու հետևում, որ իր և գործընկերների «փոխարինաբար-անվերադարձ» վերցրած մթերքները գրանցվեն... օգի մեջ։ Նա շարունակ կրկնում է սերտած կոչերն ու կարգախոսները, բոլոր հարցերի, այդ թվում նաև իր ընտանեկան «անհարթության», լուծումը դնում է «քաղաքական հիմքի» վրա՝ պնդելով. «Չէ՛, հիմի իմ ամեն բանս Մարքսով է։ Մի բոպե Մարքսից չեմ հեռանա, այս բանը լավ իմացեք» (11, 142)։ Դեմիրճյանը խիզախեց բնական գույներով ու կյանքում իրենց կենդանի նախատիպերն ունեցող հերոսների միջոցով պատկերել իրականությունն այնպես, ինչպես էր՝ առանց ճառերի ու զեկույցների, ծափահարությունների ու պարգևատրությունների։ Գրողին քննադատեցին պիեսում «բացասական տիպերի մոայլ տիրապետության»[2] համար։ Այնինչ Դեմիրճյանի երգիծանքն ուղղված էր երկրում ստեղծված համակարգի դեմ, երբ պլաններով, կոչերով տալված՝ չէին տեսնում գործի ու խոսքի աղաղակող հակասությունը, ճառերի հետևում չէին երևում իսկական դեմքերն այն «գործիչների», որոնց համար մարդը բոլոր պայմաններում էլ սոսկ «ուտող մեքենա է», ուրիշ ոչինչ։

«Մեծ աղմուկ հանեց «Նապոլեոն Կորկոտյանը», որի նյութը հայտնի է, բայց քննադատության պատմությունը ևս անհետաքրքրական չեղավ։ Քննադատության պահանջը, որ դրական տիպերը ավելի ուժեղ դուրս գան և հաղթեն բացասականներին, որքան որ անբացասելի և արդարացի պահանջ էր, նույնքան էլ պրոբլեմատիկ էր այն մեթոդը, որով կայելի կլիներ իրագործել այդ ցանկությունը» (14, 16),—տարիներ անց հիշում է Դեմիրճյանն ու եզրակացնում, որ «լուրջ սատիրական կոմեդիայի դարն անցած պետք էր համարել»։ Ժամանակի քննադատությունն ամեն կերպ աշխատում էր դրամատուրգիան սահմանազատել սատիրական տարրերից։ Դեմիրճյանը դժգոհում էր, որ այդ դեպքում դրամատուրգը զրկվում է «կյանքի լուրջ արատների ձաղկումից» (12, 86)։ Նա կոչ էր անում գրողներին՝ «Վերջ կրկնություններին, ընդօրինակումներին։ Նոր կերպարներ, նոր գծեր,— և այդ բոլորը կենդանի կյանքից և ոչ թե բեմից ու գրքերից» (12,209)։ «Իմ բազմամյա փորձը սովորեցրել է ինձ.— գրականությունն ու արվեստը չեն սիրում զգուշավորություն» (13, 351),— գրում է Դեմիրճյանը, և համոզված կարելի է ասել, որ նա իր երկերից շատերը կերտել է հենց այդ սկզբունքով։

О САТИРЕ Д. ДЕМИРЧЯНА

М. М. ХАЧАТРЯН

Резюме

Сатирические произведения—комедии, фельетоны, зарисовки, сценки, портреты—составляют важную часть литературного наследия Демирчяна. Долгие годы он занимался вопросами сатиры. Демирчян был уверен, что сатира призвана утверждать и положительные идеалы. Подтверждение тому мы находим и в произведениях сатириков-классиков.

Демирчян смело изобличал пороки. В комедии «Наполеон Коркотян» он одним из первых вывел на сцену новых «героев» новых времен.

Его критиковали за пассивность так называемых положительных героев комедии. Обвиняли в искажении действительности. На самом же деле драматург изображал героев, имевших в жизни своих многочисленных прототипов.

К сожалению, дух времени и «левизна» критики помешали дальнейшим творческим поискам Дереника Демирчяна—одного из виднейших армянских сатириков.

---

[2] Խորհրդային Հայաստան, 15. XI. 1934։